

Ը կետի համար տեխնոլոգիական դիմադրությունների ուժերի մեծությունները և ուղղությունները կզ-տվ որոշվել են էքսպերիմենտալ ձևով:

Ունենալով V և Q, կարելի է որոշել տեխնոլոգիական դիմադրության վրա ծախսվող ակնթարթային կարողությունը (օգտակար կարողությունը):

$$W_{\text{օգ}} = \frac{\gamma \cdot Q \cos(\bar{V} - \bar{Q})}{102}$$

Էքսպերիմենտալ ձևով գրանցված է ակնթարթյունների կարողության լամբանուր ծախսը W, տեխնոլոգիական դիմադրության ազդման ժամանակաշրջանում (նկ. 4ա):

Ըստ (2) ֆորմուլայի որոշում ենք մեխանիկական օ.գ.գ. ակնթարթային արժեքը: Մեխանիկական օ.գ.գ. ակնթարթային արժեքի փոփոխման բնույթը ցույց է տրված 7-րդ նկարում, կետագծով, իսկ միջին արժեքը կլինի՝  $\tau_{\text{ուր}} \cdot \alpha_2 = 0,355$ :

## ՆԵՐԿԱԽՄԸ ԷԼԵԿՏՐԱՍԱՏԻԿ ԴԱՇՏՈՒՄ

### Ս. ԱՍԱՏՐՅԱՆ Ինժեներ

Իրերի վերջնամշակման պրոցեսի ավտոմատացումն ու կոնվեյերացումը օրեցօր ավելի ու ավելի ակտուալ խնդիր են դառնում:

Վերջնամշակման-ներկման մեզ ծանոթ բոլոր եղանակներից ամենամեծ տարածում են ստացել սուզման և փոշիացման մեթոդները: Ներկման նշված եղանակների դեպքում տեղի են տնկնում լաքաներկման նյութերի մեծ կորուստներ, ինչպես նաև պատվածքի անբավարար որակ: Սեղմված օդի օգնությամբ, փոշիացման միջոցով ներկելիս, լաքաներկման նյութերի կորուստները, նայած ներկվող իրի ձերին և շափերին, համում են 60—70 %:

Այդ եղանակների թերությունները ստիպել են որոշնելու լաքաներկման նյութերի կորուստներն իշեցնելու և մակերեւութների ներկման որակը բարձրացնելու ուղիները:

Պարզվել է, որ ներկումն առավել էլեկտրաստատիկ է հանդիսացել բարձր լարման էլեկտրաստատիկ դաշտում:

Այդ եղանակի էությունը հետևյալն է:

Պասկ առաջացնող էլեկտրոդների և իրի միջև ստեղծվում է մշտական հոսանքի բարձր լարման էլեկտրական դաշտ՝ էլեկտրոդային ցանցերին բացասական, իսկ իրին դրական պոտենցիալ հաղորդելու միջոցով:

Էլեկտրական դաշտում փոշիարարից մատուցվում է փոշիացված ներկի շիթ: Ներկի մասնիկները էլեկտրականանում են և ձգվում դեպի դրականապես լիցքավորված դետալը:

Էլեկտրաստատիկ դաշտում կարող են ներկվել ամենատարբեր նյութերից՝ մետաղից, դիէլեկտրիկներից (թուղթ, ապակի, փայտ, ճենապակի և այլն) պատրաստված իրեր: Վերջին դեպքում, էլեկտրական դաշտ ստեղծելու համար, դիէլեկտրիկներից պատրաստված իրերը տեղավորում են լրացուցիչ էկրան ունեցող կախոցի վրա:

Էլեկտրական դաշտում լաքաներկման նյութերը սովորական փոշիացման և ներկման դեպքում մնում են միշտույնը:


Կիրառվող լաքաներկման նյութերի մածուցիկությունը ըստ ՎՍ-4 վիսկոզիմետրի կազմում է 15 ÷ 20 (էլեկտրական դաշտում պնևմատիկ փոշարաներով փոշիացնելիս) և 20 ÷ 35 (էլեկտրական փոշարաներով փոշիացնելիս): Էլեկտրական դաշտում ներկելու դեպքում տեխնոլոգիական պրոցեսը (մակերևույթի նախապատրաստում, նախաներկում, չորացում և այլն) չի փոխվում:

Պնևմատիկ փոշարաներով ներկելու դեպքում (նկ. 1), որպես պսակ առաջացնող էլեկտրոդներ կիրառվում են շրջանակների վրա ձըգված, մետաղարերից պատրաստված էլեկտրոդային ցանցեր կամ ասեղնաձև էլեկտրոդներ:


Էլեկտրոդային ցանցերի ձեզ կախված է ներկվող իրերի կոնֆիգուրացիայից:

Էլեկտրական փոշարաներով ներկելու դեպքում (նկ. 2) պսակ առաջացնող էլեկտրոդներ են հանդիսանում թասի, սնկիկների, սկավառակների և այլ ձեռվ փոշիացնող հարմարանքները: Վերջին հարմարանքն ավելի լավ է, քանի որ ներ-

կերի մասնիկները լիցքն անմիջապես ստանում են թասից և ուժագծերով ուղղվում դեպի ներկվող իրերը:



Նկ. 1. Խցիկի չափերը էլեկտրաստատիկ դաշտում օդային փոշացման ժամանակ.  
1—էլեկտրաներկման խցիկ, 2—կանվեյեր, 3—իրեր, 4—էլեկտրոդային ցանցեր, 5—էլեկտրոդեր, 6—փոշարարեր, 7—շրջափակոց, 8—վեճախիացիա:



Նկ. 2. էլեկտրաներկման խցիկ թասանե փոշարարներով:  
1—խցիկ, 2—կանվեյեր, 3—վեճախիացոր, 4—իրեր, 5—էլեկտրափաշարար նամարանեներ:

Կաթիլների լիցքի մեծությունը որոշվում է հետևյալ արտահայտությունից՝

$$e = H^2 \left( 1 + 2 \frac{E-1}{E-2} \right) \quad (1)$$

իսկ կաթիլի վորա ազդող ուժը համեմատական է կաթիլի լիցքին ու էլեկտրական դաշտի լարվածությանը և որոշվում է հետևյալ արտահայտությունից՝

$$F = neH = H^2 r^2 \left( 1 + 2 \frac{E-1}{E-2} \right) \quad (2)$$

որտեղ

$n$ —կաթիլի էլեկտրոնների թիվն է,

$H$ —դաշտի գրադիենտը,

$r$ —կաթիլի շառավիղը,

$e$ —էլեկտրոնի լիցքը,

$E$ —լաքաներկման նյութի դիէլեկտրիկ թափանցելիությունը:

Ինչպես երևում է 1 և 2 արտահայտություններից, էլեկտրաստատիկ պատվածքի պայմանների վրա ազդեցությունը են գործում յուրաքանչյուր առանձին մեծությունը և, հատկապես, դաշտի գրադիենտը։ Այս գործությունը կախված է պասկ առաջացնող էլեկտրոդին հաղորդվող լարումից և էլեկտրոդի ու ներկվող իրի հեռավորությունից։ Այս բարձրացմանն արգելում է էլեկտրոդի և հողակցված իրի միջև կայծային պարագում առաջանալու հնարավորությունը։

Կարենոր նշանակություն ունի նաև կաթիլի չափը, որը, նայած փոշիացմանը հարմարանքի ձևին, կարող է փոխվել միկրոնից մինչև միլիմետր։ Լիցքավորված կաթիլների շարժման ուղղությունը որոշվում է էլեկտրական դաշտի ուժագծերի ուղղություններով։ Կաթիլի սկզբնական արագությունը, որը որոշվում է պուլվերիզատորում եղած օդի ճնշմամբ, պետք է անքան փոքր լինի, որպեսզի ներկի մասնիկները կարողանան ամենամեծ լիցքը ստանալ:


Այդ պատճառով պուլվերիզատորում եղած օդի ճնշումը պետք է իշեցնել մինչև  $1,2 - 1,5$  մթն։ Պասկ առաջացնող էլեկտրոդներն անհրաժեշտ է պատրաստել բավական բարակ, ձգված մետաղալարերից, որոնք պատճ են առաջացնում պոտենցիալների նվազագույն տարրերության դեպքում։

Հայտնի է, որ բարդ կոնֆիգուրացիայի իրերն ովհեն անհավասարաշափ էլեկտրական դաշտ և, հետևապես, մակերեսույթի վրա ուժագծերի տարրեր խոտափյուն։ Այդ նշանակում է, որ իրերի տուուցիկ մակերեսույթների վրա լաքաներկման նյութի նստումը կկատարվի հաջող, իսկ խորացումներում՝ պակաս հաջող։ Դրա համար էլ խորացումներ ունեցող իրերի համար էլեկտրաներկումը նախագծելու ժամանակ անհրաժեշտ է նախատեսել լրացրուցիչ փոշիացման խցիկ՝ այդպիսի տեղերի նախնական ներկման համար։

Բացի դրանից, ներկման առավելագույն հավասարաշափություն ձեռք բերելու համար կիրառվում է դետալների պտտում՝ էլեկտրադաշտում նրանց գտնվելու ժամանակ, բայց բարդ դետալների ներկման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է ուսումնասիրել ներկման այդ կոմբինացված մեթոդի հնարավորությունները և բավարար լինելը։

3-րդ նկարում ցույց է տրված էլեկտրաստատիկ դաշտում թասածև փոշարարներով ներկելու համար անհրաժեշտ տեղակայումի մոտավոր

սկզբունքային սխեման, որը կիրառվել է Լենինգրադի Ս. Մ. Կիրովի անվան և Զելյարինսկի գործարաններում:



Նկ. 3. Տեղակայումի սկզբունքներին էլեկտրական սխեման:

АТ—ավտոտրանսֆորմատոր: ТВ—բարձրացնող տրանսֆորմատոր: ТН—շիկուցման տրանսֆորմատոր: КР—կենտրոն: МА—միկրապերմետ: В—փոլումետր: Р<sub>в</sub>—մարող դիմադրույթուն: Р<sub>б</sub>—բարաստային դիմադրույթուն: Р<sub>макс</sub>—մաքսիմալ ռելի: ПМ<sub>1</sub>, ПМ<sub>2</sub>, ПМ<sub>3</sub>—մագնիսական գործարկիչներ: ПМ—ռելեսիկ մագնիսական գործարկիչ: КУ—կառավարման կոճ: ПК—պակետային անջատուիչ: М—ծգող մագնիս: С<sub>1</sub>, С<sub>2</sub>—էլեկտրապենսատիկ ամրածիչ: ВК—ծայրային անջատուիչ: ИР—կայծային պարափիչ: Р—պարափիչ: Л<sub>1</sub>, Л<sub>7</sub>—ազդանշման լամպեր: ПР—ապահովիչներ: Р<sub>2</sub>—շունչավորող դիմադրույթուն: И—կանվելեր: Р<sub>б</sub>—միջնա 10 մա հոսանք սանհանափակող պաշտպանական դիմադրույթուն: П<sub>макс</sub>. в և П<sub>макс</sub>. и—կանոնականեր բարձրացնող տրանսֆորմատորի բարձրացնող:

էլեկտրաստատիկ դաշտում  
ներկման համար անհրաժեշտ.  
տեղակայումի հիմնական էլե-  
մենտների մեջ մտնում են՝ 1)  
բարձր լարման աղբյուրը, որն  
ընդգրկում է կառավարման, ազ-  
դանշման և պաշտպանության  
բոլոր էլեմենտները. 2) պսակ  
առաջացնող հարմարանքը (էլեկ-  
տրամեխանիկական փոշարա-  
ներ կիրառելիս այդ հարմարանքը  
չի պահանջվում), 3) համապա-  
տասխան շտատիվներով պնևմա-  
տիկ կամ էլեկտրամեխանիկա-  
կան փոշարարներ, 4) դետալնե-  
րը ներկման գոտու միջով տեղա-  
փոխիլու մեխանիզմ (կռվելյեր,  
կախոցները և այլն), 5) ներկման,  
գոտին շրջափակող խցիկ, 6) փո-  
շարարների ներկը մատուցելու  
սիստեմ և օժանդակ ապարա-  
տուրա:

Տեղակայումը բարձր լարու-  
մով սնելու աղբյուր է ծառայում  
համուղղիչ բլոկը, որի հիմնական  
էլեմենտներ .հանդիսանում են  
բարձրավոլտ կենտրոնը, բարձր  
լարման տրանսֆորմատորը և  
կենտրոնի շինացման տրանս-  
ֆորմատորը:

Բարձր լարումը հաղորդվում է  
միայն պսակ առաջցնող էլեկ-  
տրոդներին (ցանցերին կամ փո-  
շարաբների թասերին): Թասածքն  
փոշարարը այդ տեղակայումի  
գլխավոր էլեմենտներից մեկն է,  
այն նախանշված է ներկման գո-  
տու լաքաներկման նյութը փո-  
շիացնելու համար: Թասը պտըտ-  
վում է փոքր օդային տուրբինի  
օգնությամբ, որի լիսեռի վրա  
նա նստեցված է: Տուրբինի իրա-  
նում ամրացված է ստատոր,

որը ծայրափողակներ ոմի ոռտորի թիակներին օդ մատուցելու համար: Ոռտորը պտտվում է սեղմված օդի ազդեցության տակ: Թասի պտըտման արագությունը հեշտությամբ կարելի է կարգավորել սեղմված օդի ճնշման փոփոխությամբ: Թասի պտտման դեպքում առաջացող կենտրոնախույս ուժի է էլեկտրական բարձր լարման շնորհիվ ներկի մասնիկները պոկվում են նրա եզրիկից և շոշափողով թոշում դեպի թասի ճակատային շրջագիծը՝ նրա պտտման հարթության մեջ: Թասաձև փոշարացներն ամրացվում են կանգնակներին, որոնց կոնստրուկցիան նախատեսում է թասի հավասարաշափ ճոճումը ուղղաձիգ հարթության մեջ:

Որպես տեղափոխող մեխանիզմ հաճախ կիրառում են շղթայավոր կախովի կոնվեյեր այսպիսի հարմարանքներով, որոնք բուվլ են տալիս նրանք պտտել կոնվեյերի շարժման ժամանակ: Կախոցները, նայած ներկման ենթակա դետացների չափերին, տարբեր կոնստրուկցիա են ոմանառում:

Դետալները պետք է այնպես կախել, որպեսզի նրանք միմյանց չէկրանավորեն: Կոնվեյերի շարժման արագությունը պետք է լինի 2 մ/րոպե-ից ոչ պակաս: Ներկման խցիկն անհրաժեշտ է աշխատանքի անվտանգության և առողջապահության պայմանները պահպանելու համար: Լուծիշի գոլորշիների պայթյունավտանգ կոնցենտրացիայի գոյացումը կանխելու համար խցիկն ունի արտածելի օդափոխության սիստեմ: Իրը մըտցնում են նրա չափերին համապատասխան որմանացքի միջով (նկ. 1 և 2):

Անվտանգության տեխնիկան էլեկտրաստատիկ դաշտում ներկելու գեպիում: Բարձր լարման հոսանքի հարվածումը կանխելու համար սպասարկող անձնակազմը պետք է պահպանի բարձրավոլտ տեղակայումների շահագործման կանոնները ու նորմանները: Թեև այդ հոսանքի աղբյուրը փոքր կարողության է, բայց հոսանքատար մասերին կպչելը կյանքի համար վտանգավոր է: Ռևտի հոսանքի հարվածից պաշտպանվելու համար տեղակայումը պետք է սարքավորված լինի ավտոմատիկ պարպիշով, հոսանքի սահմանափակիչով և դռների բլոկավորող կոնտակտներով, որոնք նախազգուշացնող ազդանշումով բացառում են բարձր լարման մատուցման հնարավորությունը բաց դռների դեպքում:

Սնման աղբյուրից տեղակայումն անջատելուց հետո, լարման տակ գտնվող սարքավորման բոլոր մասերը պետք է հողակցվեն, իսկ բևեռները կարճացվեն: Այդ անհրաժեշտ է սարքավորման բարձրավորությունը էլեմենտներից մնացորդային ունակային լիցքը հանելու համար:

Տեղակայումի սարքավորման բոլոր մետաղամասերը, տրոնք լարման տակ են գտնվում, պետք է հողակցվեն:

Ներկումը էլեկտրաստատիկ դաշտում հաջողությամբ կիրառվում է արտասահմանյան երկրներում (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Չիխոսլովակիա և այլն): Հատկապես ԱՄՆ-ում այս մեթոդը վերջին տարիներում լայն տարածում է ստացել: Առանձին ֆիրմաներ զբաղվում են ներկման հարցերի կոմպլեքսացին լուծմամբ, էլեկտրաներկման առավել ուսցիությալ մեթոդի ընտրությամբ, դետալների էքսպերիմենտալ ներկման տեխնոլոգիայի մշակմամբ, ողջ սարքավորման պատրաստմամբ և կոմպլեկտային մատակարարմամբ, տեղակայումի կարգավորմամբ, ինչպես նաև սպասարկող անձնակազմի ուսուցմամբ:

Էլեկտրաստատիկ դաշտում ներկելու մեթոդը հաջողությամբ կիրառվում է Սովետական Միության շատ գործարաններում:

Մեզ մոտ, ուսուցուելիկայում, այդ մեթոդը կարելի է կիրառել ժամանակակից գործարանում (զարթեցուցիչները ներկելու համար), կենինականի հեծանիվի գործարանում, Հայէլեկտրագործարանում (սեղանի լամպերը, տրանսֆորմատորների շրջապատյանները ներկելու համար), կոմպրեսորների գործարանում (ուսիվերները և այլն ներկելու համար):

Ժամացուցիչի գործարանն արդեն ստացել է սարքավորումը, կազմակերպական աշխատանքներ են տարվում և շուտով կսկսվի մոնտաժը:

Նախնական հաշվարկները ցուց են տվել, որ այս մեթոդի դեպքում ձեռք է բերվում 40—50 %-ով ներկման նյութի տնտեսում: Զգալիորեն բարելավվում է ներկման որակը և ամբողջ մակերեւույթի վրա հավասարաշափ շերտ է ստացվում: Հնարավոր է ներկման պրոցեսի լրիվ ավտոմատացումը, որի դեպքում աշխատանքի արտադրույականությունը բարձրանալում է 7—8 անգամ: Ստացվում է էլեկտրաէներգիայի զգալի տնտեսում: Ներկման ցեխում բարելավվում են աշխատանքի սանիտարական-հիգիենիկ պայմանները: